

ԿԱԼԻԴԱՍԱՅԻ «ԱՄՊ-ԱՎԵՏԱԲԵՐ» ՊՈԵՄԻ
 ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
 ԵՐԵՔ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

IV—V դդ. հնդիկ մեծ բանաստեղծ և թատերագիր Կալիդասայի «Ամպ-ավետաբեր» պոեմի արժանիքներից մեկը պատկերավորության հարուստ համակարգն է:

Կալիդասան վարպետորեն է օգտվում խոսքի ֆիգուրներից՝ պատկերները արտահայտել, շոշափելի ու տեսանելի դարձնելու համար:

Պոեմի առանցքը, նրա շարժիչ ուժն ու գործողությանը մղում տրվողը շնչավորումն է¹: Շնչավորումը թափանցում է նաև մակդիրների, փոխաբերությունների և այլ ֆիգուրների մեջ, որոնք պոեմին առանձին փայլ ու գեղեցկություն են տալիս:

Սակայն Կալիդասան խոսքի ֆիգուրների մեջ նախապատվությունը տալիս է համեմատությանը: Նա համեմատություն ստեղծելու մեծ վարպետ է: Upamā Kālidāsasya—Կալիդասայի համեմատություն արտահայտությունը նույնքան հայտնի է, որքան և ինքը բանաստեղծը:

Հնդկական պոետիկաները մեծ ուշադրություն են նվիրում բանաստեղծական ֆիգուրների kāvyalamkāra (alamkāra—զարդարանք) դասակարգմանը: Նրանց կարեորությունը այնքան էր ընդգծվում, որ բանաստեղծական արվեստի մասին գիտությունը սկսեցին անվանել alamkāra-śāstra (գիտություն զարդարանքների մասին): Չնայած դրան, տեսաբանները միշտ էլ մատնանշում էին, որ կարեորը ոչ թե alamkāra-ն է, այլ alamkārya-ն, այսինքն ոչ թե զարդարանքը, այլ այն, ինչ զարդարվում է: Հնդկական պոետիկաներում ընդգծվում էր նաև, որ upamā-ն՝ համեմատությունը, ամենանշանակալիցն է խոսքի ֆիգուրների մեջ: XVII դարի տեսաբան Ապպայյա Դիկշիտան (Appayya Dikṣita) իր Citramīmāṃsā աշխատության մեջ գրում է.

¹ Կալիդասայի ստեղծագործությանը և մասնավորապես «Ամպ-ավետաբեր» պոեմին ծանոթանալու համար տե՛ս В. В. Аракелян, Особенности синтаксической структуры поэмы Калидасы «Облако-вестник», «Լեզվի և ոճի հարցեր», 9, Երևան, 1985: С. Д. Серебряный, К анализу поэтики санскритской кавы (на материале поэмы Калидасы «Облако вестник»). «Восточная поэтика. Специфика художественного образа», М., 1983, стр. 109—120.

upamaikā śailuṣī samprāptā citrabhūmikābhedān
ranjayantī kāvyarange mtyantī tadvidāṃ cetaḥ.

«Համեմատությունը գրականության բեմում միակ դերակատարուհին է, որ տարբեր դերեր է պարում ու հիացնում է նրանց, ովքեր օժտված են հասկանալու կարողությամբ»²:

Իսկ մեկ այլ ռճաբան՝ Վիշվանաթան (XIV դ.) իր «Սահիտյադարպանա» («Պոեզիայի հայելի») աշխատության մեջ այսպես է արտահայտում ընդհանուրի կարծիքը. «Երբ գալիս է լիմաստի զարգարանքների» մասին խոսելու ժամանակը, որպես գլխավոր պետք է նշել նմանության վրա հիմնված (զարգարանքները), իսկ նրանց մեջ առաջինը՝ համեմատությունը, որից կախված են մյուս բոլորը»³:

Ըստ հնդկական պոետիկաների «համեմատությունը կապ է հաստատում երկու բաների միջև» (upameya, upamāna «համեմատության առարկա և պատկեր») ընդհանուր հատկանիշով (sādhāranadharmā «երբորդ անպամբ») և իրականացվում է նմանություն ցույց տվող մակրայական մասնիկի օգտագործմամբ՝ aupamyavācaka «ձևական ցուցիչ» (նման, ինչպես և այլն)⁴:

Ժամանակակից լեզվաբանության մեջ, որը գտնվում է լեզվաբանության և գրականագիտության սահմանին, փոխաբերությունը ուսումնասիրելիս երեք հիմնական ոլորտ են առանձնացնում.

1. Առաջին ոլորտը փոխաբերության կառուցվածքի ուսումնասիրությունն է, զուգադրվող առարկաների և երևույթների կապի ձևերը և այլն:
2. Երկրորդ ոլորտը այն բնագավառներն են, որտեղից բանաստեղծը վերցնում է փոխաբերություն ստեղծելու համար անհրաժեշտ առարկաներն ու երևույթները: Այդ բնագավառների ուսումնասիրությունը շատ բան կտա բանաստեղծի երկերը բնութագրելու համար, կբացահայտի նրա հետաքրքրությունների շրջանակը, կապը այդ օբյեկտների հետ, այն ներքին ապրումը, որի հետևանքով բանաստեղծի գիտակցության մեջ իրականությունը այլափոխվում է, ծնունդ տալով փոխաբերությանը:
3. Եվ, վերջապես, երրորդ ոլորտը՝ փոխաբերությունների գործա-

² Մեշերումն ըստ Pilla K. Chellappan, Similes of Kālidāsa (Visva-Bharati Studies, Vidya Bhavana № 7). Calcutta, 1949, p. X.

³ Մեշերումն ըստ П. А. Гринцер, Санскритская поэтика и античная риторика: теория «украшений». «Восточная поэтика. Специфика художественного образа», М., 1983, стр. 370.

⁴ Gerrow Edwin. A Glossary of Indian Figures of Speech. The Hague Paris, 1971, p. 17.

ությունները, այսինքն փոխաբերության խաղացած դերը բանաստեղծական բովանդակության, կերպարի ստեղծման գործում⁵:

Նույն տեսանկյուններից կարելի է քննել ցանկացած պատկերավորության միջոցները, այդ թվում և համեմատությունները:

Իհարկե սիրո ռասան⁶, հերոսի հոգեկան նկարագիրը բացահայտելու մեջ համեմատությունների դերի ուսումնասիրությունը անհնար է առանց պոեմի բնօրինակին դիմելու, առանց հերոսի հոգեվիճակի վերլուծության: Եվ անխուսափելիորեն մեր աշխատանքում պետք է դիմենք գրականագիտությանը: Այդ մասին Ծ. Տ. Չերկասովան գրում է. «Գրողի կողմից ստեղծագործական մտահղացումը մարմնավորելու համար օգտագործվող լեզվական մյուս արտահայտչամիջոցների մեջ մետաֆորի, նրա ունեցած դերի ու տեղի ուսումնասիրության հետ կապված հարցերի շրջանակը շափաղանց ընդարձակ է: Սոսկ լեզվաբանական վերլուծությունը այդ դեպքում անխուսափելիորեն միահյուսվում է գրականագիտական վերլուծության հետ. հեղինակի լեզուն, ինչպես հայտնի է, ներավոր չէ ուսումնասիրել՝ գեղարվեստական ներգործության նկատմամբ նրա ունեցած բարդ ուղղվածությունից դուրս»⁷.

1. իկծմ անցնենք համեմատությունների ուսումնասիրության առաջին բլորտին, դիտարկենք համեմատությունների կառուցվածքը:

Համեմատությունը սանսկրիտական գրականության մեջ ձևավորվում է մի քանի եղանակով.

1) Մակրայական մասնիկների միջոցով. *iva, yatha* և այլն:

(1) *nihradī te muraja īva cetkandareṣu dhvanīḥ syāt*⁸ (56) «Եթե քարայլներում քո որոտը դարձա, ինչպես թմբուկ»...

2) Բառաբարդմամբ: Այստեղ պատահում են մի քանի դեպքեր.

ա) Երբ ձևական ցուցիչը մտնում է բարդ բառի կազմի մեջ: «Ամպ-

⁵ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս В. И. Фатюченко. К вопросу о преемственности в развитии лингвистических понятий («метафора»); (см. О. С. Алуханова : : 19. О принципах и методах лингвистического исследования, М., 1966).

⁶ Իրասա — հնդկաներն պոետիկական այսպես էին կոչում այն գեղագիտական ապրումը, որն արտահայտում էր տվյալ ստեղծագործությունը և հազորդում ընկալողին:

Տարբերում էին 9 ռասա, որոնք համապատասխանում էին ութ կայուն զգացմունքների. սիրո, ուրախության, տխրության, ցամաան, հերոսության, վախի, խորշանքի, հիացմունքի. խաղաղության ռասաներ.

⁷ Е. Т. Черкасова, О метафорическом употреблении слов, «Исследования по языку советских писателей», М., 1959, с. 307.

⁸ Մեղիբերումները՝ պոեմի քննական հրատարակությունից: Ցե՛ս Kālidāsa. The Megha-dūta of Kālidāsa, critically edited by S. K. De. New Delhi, 1957. Տողբ վերջում գրվող թվանշանը ցույց է տալիս բառատողի համարը:

ավետարեբր» պոեմում ցուցիչը գտնվում է միշտ բարդ բառի վերջում, թեև ընդհանրապես կարող է և միջին դիրք գրավել: Որպես ձևական ցուցիչ են հանդես գալիս *prekṣanīyaṃ* «նման», *upameya* «համեմատելի», *sa-varna* «նման» և այլ բառեր: Օրինակ՝

(2) *āśādhasya prathamadvase meghamāśliṣṭasānum
vaprakṛīḍāparinatagajaprekṣanīyaṃ dadarśa.* (2)

«Աշադհա ամսի առաջին օրը նա տեսավ մի ամպ, որը գրկել էր գագաթը լեռան, ինչպես այն փիղը, որ խոնարհվել է հողաթմբի հետ խաղալու համար»⁹:

Այստեղ *prekṣanīyaṃ* «նման» ձևական ցուցիչը գտնվում է բարդութան վերջում:

բ) Համեմատությունը բառաբարդման միջոցով կարող է ձևավորվել և առանց ցուցիչի: Այդ դեպքում բարդ բառը կազմվում է համեմատության պատկերից ու համեմատության հատկանիշից, որը վերջավոր դիրքում է: Ամբողջ բարդությունը որոշիչ է համեմատության առարկայի համար:

(3) *utpaśyāmi tvayi taṭagate snigdhabhinnāñjanābhe
sadyaḥ kṛttadviradadaśanacchedagauryasya tasya* (59)

«Նախազգում եմ, կրք, նման յուղում տրորված ծարիրի, դու հանկարծ ելնես նրա (այսինքն լեռան) գագաթը ներմակ, (ինչպես) նոսրևատ շեղրք փղի ծանիֆի...»:

(4) *saudamīnya kankanikaśasniḡdhayā darsáyorvīm* (37)

«Յույց տուր երկիրը կայծակովդ՝ շողշողուն (ինչպես) ոսկեշերտիկը մլնակի վրա...»:

Ընդգծված *gaurasya* (սպիտակ) և *snigdhayā* (շողշողուն) ածականները գտնվում են բարդությունների վերջում:

գ) Երբեմն բահուլորիհի¹⁰ բարդության վերջին բաղադրիչը համեմատության առարկան է, իսկ մյուս բաղադրիչները՝ համեմատության պատկերը և նրա որոշիչը: Ամբողջ բարդությունը որոշիչ է բնութագրվող գոյականի համար: Այսպես օրինակ, յակշայի (հնդկական դիցաբանության մեջ այսպես են կոչում Նարստության աստծուն)՝ Կուբերա-

⁹ Հայերեն թարգմանության մեջբերումները՝ Կալիդասա, Ամպ—ավետարեբ, Առաջարանը, թարգմանությունը սանսկրիտից և ծանոթագրությունները Վ. Վ. Առաքելյանի «Գարուն», 1979, № 4:

¹⁰ Բահուլորիհի—ստացական բարդ բառ. «որ ունի...», «որին բնորոշ է...» ածականի իմաստով: Օրինակ՝ *hiranyaratha* «ոսկե կառք ունեցող», *hiranyapāni* «ոսկե ձեռք և այլն: Բահուլորիհի բարդության վերջին անդամն անպայման գոյական է:

յին ծառայող կիսաստվածներին) կնոջը այլ որոշիչների հետ մեկտեղ բնութագրում է

pakvabimbādharoṣṭhī բահուժրիհին, որ կարելի է թարգմանել այսպես՝

«Որի (այսինքն կնոջ՝ Վ. Ա.) շուրթերը հասուն բիմբալի¹¹ (նման) են»: (Բառացի հասունբիմբաշուրթ կին)

3) Ածանցումը, որպես համեմատություն կազմելու միջոց, իրականացվում է հետևյալ կերպ. որպես ձևական ցուցիչ է օգտագործվում -va: ածանցը: Այդ ածանցը միանում է համեմատության պատկեր հանդիսացող բառին: Պոեմում այս միջոցը օգտագործված չէ:

4) Միջոցներից է նաև հետևյալը. համեմատության պատկերը կամ նատկանիչը դառնում են վերացական գոյական, դրվում հայցական յուրովրժ և օգտագործվում որպես տեղի պարագա՝ շարժում ցույց տվող բայերի հետ: Օր. kalabhatañutām gatvā բառացի՝ գնալով դեպի մատղաշ վրի բարակույթուն, այսինքն դառնալով բարակ, ինչպես մատղաշ փիղը:

Բացի այս միջոցներից, կալիդասան և հնդիկ բանաստեղծներն ընդհանրապես օգտվում են բազմաթիվ նկարագրական միջոցներից, որոնք իրենց նատուկ անուններն են ստացել պոետիկաների զրբերում: Այսպես, Ապպայյա Դիկշիտան (XVII դ.) իր Citramīmamsa աշխատության մեջ համեմատություն արտահայտող 22 տարբեր ֆիգուրներ է նշում: Ահա, օրինակ, smarāṇa 'հիշողություն' կոչվող համեմատությունը: «Ամպ-ավետարեր» պոեմի 'երոսը' յակչան, դիմելով ամպին՝ ասում է.

(5) tasyastire racitaśikharāḥ peśalairindrānīlaiḥ
kriḍāśailāḥ kanakakadaliveṣṭanaprekṣanīyah
madgehīnyāḥ priya itl sakhe cetasā kātareṇa
prekṣyopāntasphuritataḍitām tvām tameva smarāmi (74)

Վյետեղ լճեղրին Զվարճանքների բլուրն է շքնաղ:

Կազաթը համակ ողորկ շափյուղա,

Իսկ ցանկապատը՝ բանանի ոսկե ծառերից Նրաշք.

Նյդ սարն եմ հիշում, ով իմ բարեկամ, խոռովված հոգով,

Նրբ դիտում եմ քեզ ու զարկերը քո շողշողուն շանթի»:

Այստեղ smarāmi «հիշում եմ բայի միջոցով Զվարճանքների բլուրը՝ համեմատվում է ամպի հետ:

Ահա և, այսպես կրչված, «մոլորություն» համեմատության մի նմուշ.

¹¹ Իմբա—ծառ՝ բոսորագույն պտուղներով:

(6) adreḥ śrīḡgam haratī pavanāḥ kim svīdityunmukhībhir
dīśtoḥchrāyaścakītacakītaṃ mugdhasiddhaṅganābhīḥ (14)

«Այս ի՞նչ է, քամին սարի գագաթն է պոկել ու տանում» —
Այդպես կգոչեն սիրողները¹² շքնաղ կանայք, վախեցած քո
հզոր ուժից...»:

Սիրողների կանայք հզոր ամպից վախեցած, այն՝ քամուց պոկված
ու քշվող լեռնագագաթի տեղ են դնում: Այսպիսով, անուղղակիորեն
ամպը համեմատվում է լեռնագագաթի հետ:

Մենք որպես համեմատություն ենք դիտում բուրբ այն ֆիգուրները,
որոնք upamā անվան տակ միավորել է Ապպայյա Դիկշիտան, ներառ-
յալ նաև rūpaka -ն, որը համապատասխանում է գոյականական փո-
խարհությունը¹³, Օրինակ. դեմք-լուսին, ծառ-ձեռքեր և այլն:

Կալիդասան պարզ համեմատությունների հետ մեկտեղ (որոնք
կազմված են մեկ առարկայից և մեկ պատկերից) լայնորեն օգտվում
է, այսպես կոչված, կոմպլեքսային, բարդ և համադրական¹⁴ համեմա-
տություններից: Դիտարկենք բարդացման եղանակները առանձին-
առանձին:

1) Բանաստեղծը մի քանի պարզ համեմատություններ համատե-
ղում է՝ ստեղծելով պարզ համեմատությունների սովորական գումար:
Նրանք միավորվում են, որովհետև համեմատության առարկաները միև-
նույն օբյեկտի առանձին մասերն են: Իսկ համեմատության պատկեր-
ները կարող են ա) իրարից անկախ լինել կամ բ) պատկանել միևնույն
օբյեկտին:

ա) Որպես օրինակ կարող է ծառայել 101-րդ քառատողը, ուր բա-
նաստեղծը նկարագրում է հերոսի կնոջ գեղեցկությունը:

(7) śyāmāsvaṅgam cakītaharīṇīprekṣaṇe dīśtīpātām
vaktracchāyaṃ śaśinī śikhināṃ barhābhāreṣu keśān
utpaśyāmi pratanuṣu nadīvīcīṣu bhrūvīlāsān
hantalkasthaṃ kvacidapi na te caṇḍī sādīśyamastī. (104)

¹² Սիրողներ — կիսաստվածներ, որ աչքի են ընկնում մաքրությանը ու առաջի-
նությանը, ապրում են երկնային ոլորտներում, Երկրի ու Արեկի միջև:

¹³ Փաստորեն այդպիսի փոխարհություն տարրերությունը համեմատությունից, ինչպես
նշում էր դեռ Արիստոտելը, կայանում է նրանում, որ առաջինը զուրկ է նմանության ցու-
ցիչից:

¹⁴ Դրանց մասին մանրամասն տե՛ս С. Л. Невелева, Вопросы поэтики древ-
неиндийского эпоса, М., 1979, с. 38—42.

«Տեսնում եմ աշքերդ վիթի աշքերում, ճկուն մարմինդ՝
լիանայի մեջ,

լուսնի մեջ՝ դեմքդ, վարսերդ՝ պոչում զմրուխտահավի,
Գևտի ծփանքում՝ խաղը ունքերիդ.

Բայց ողջ բո տեսքը շունի նմանը, ո՛վ դու իմ շքնաղ»:

Այստեղ համեմատությունների առարկաները վերաբերում են միև-
նույն օբյեկտին, իսկ պատկերները անկախ են:

(8) tasyotsaṅge praṇayina iva srastagaṃgādukūlāṃ
na tvam dīṣṭivā na punaralākaṃ jñāsyase kāmacārin
ya vaḥ kale vahatī salilodgāramuccervimānā
muktājālagrathitamalakam kāminīvābhraṇdam. (63)

«Լանջին այդ լեռան, ինչպես սիրածին, քնքուշ հավել է
շքնաղ Ալական,

Որ դեն է նետել ղգեստը սնդուսն — Գանգեսը լուսեղ,

Որ գմբեթներին իր երկնասլաց ապարանքների

ամպակույտեր է կրում անձրևին,

Ասես թե ցանցով մի մարգարտահյուս իր գանգուրներն է

կապել գեղուհին»:

Այս քառատողում Ալակա քաղաքը համեմատվում է սիրող կնոջ հետ: Լեռը նրա սիրեցյալն է, Գանգեսը՝ մետաքսյա ղգեստը, ապարանքները նրա մարմինն են, իսկ ամպերը՝ գանգուրները, անձրևը նմանվում է մարգարտահյուս ցանցի:

Այսպիսով, առանձին համեմատությունների առարկաները պատկանում են միևնույն օբյեկտին՝ քաղաքին, իսկ պատկերները՝ մի այլ օբյեկտի (կնոջ) առանձին մասերն են: Այս երկրորդ տարատեսակը Ս. Լ. Նեկելան անվանում է համադրական համեմատություններ¹⁵:

2) Բարդ համեմատություններ կաղմելու կալիդասայի նախասիրած միջոցը, այսպես կոչված, համեմատության եզրերի զույգեր, եռանդամներ, քառանդամներ ստեղծելն է: Եթե սովորական պարզ համեմատությունը ունենում է համեմատության առարկա $-C_1$, համեմատության պատկեր $-C_2$ և համեմատության հատկանիշ $-π$, ապա այսպիսի բարդ համեմատությունը ունենում է մեկից ավելի համեմատության առարկա $-C_1', C_1''$, C_1''' և այլն և մեկից ավելի համեմատության պատկեր $-C_2, C_2', C_2''$ և այլն:

¹⁵ С. Л. Невелева. Вопросы поэтики древнеиндийского эпоса, стр. 40—41.

Յուրաքանչյուր առարկա ունենում է իր պատկերը, որի հետ կապվում է մի որևէ հատկանիշով, բայց բացի դրանից համեմատության երկու բազմանդամ եզրերն օժտված են դրանք իրար հետ կապող մի ընդհանուր փոփոխական (բայական) հատկանիշով:

Տե՛ս օրինակ (2):

Համեմատության առարկա են դառնում ամպը և լեռնազագաթը, իսկ համեմատության պատկեր՝ փիղը և հողաթումբը: Ընդհանուր հատկանիշը, որով ի մի են բերվում համեմատության բազմանդամ եզրերը, օճիսթ գրկել էր, բայն է, որ համեմատության մյուս եզրում ունի իրեն համապատասխան vaprakrīdāparinata խոնարհված՝ խաղալու համար՝ փոփոխական հատկանիշը: Սրանք այն հատկանիշներն են, որոնց միջոցով համեմատության եզրերը փոխադարձ կապի մեջ են մտնում: Սակայն համեմատության յուրաքանչյուր առարկա իր համապատասխան պատկերի հետ ունի նաև մասնավոր ընդհանուր հատկանիշ՝ ամպը մեծ է, ինչպես փիղը, իսկ դրան համապատասխան էլ լեռնազագաթը ամպի համեմատությամբ փոքր է, ինչպես հողաթումբը: Առանձին վերցրած լեռնազագաթը հնարավոր չէր համեմատել հողաթմբի հետ, դա հնարավոր է այնքանով, որքանով որ ամպը նմանեցվում է փղի: Այդտեղից էլ երևում է, որ այսպիսի համեմատությունների մեջ համեմատության առարկաներից մեկը գլխավորն է պատկերավորության ուրույն սիստեմ ստեղծելու համար, իսկ մյուս առարկան կամ առարկաները համեմատության եզրեր են գտնում այդ գլխավոր առարկային համապատասխան: Այդ զույգը մղում է տալիս համեմատությանը: Վերցնենք մի օրինակ ևս.

(9) tvayyadātum jalavanate śarṅgino varṇacaure
tasyaḥ śiṅdhoḥ pṛthumapī tanuṃ durabhāvātpravāham
prekṣiṣyaṅte gaganagatayo nunamāvarjya dr̥ṣṭīr
ekam muktagaṇamiva bhavaḥ sthulamadhyendranīlam. (46)

«Երբ սևաթույրդ, խոնարհվես գետի ջուրը խմելու,
Նրա լայն հոսքը կթվա հեռվից երկնքում խաղաղ բնակվողներին
Նեղ, ինչպես գտտի մի մարգարտահյուս, երկիրն օղակող,
Որի ճարմանդը ընդելուզված է մեծ շափյուղայով»:

Ամպը և գետը նմանեցվում են շափյուղայով ներդրվագված մարգարտյա գոտու: «Խոնարհված»-ը այն հատկանիշն է, որով գետը և ամպը փոխհարաբերության մեջ են մտնում և հնարավոր են դարձնում բարդ համեմատությունը: Բայց միաժամանակ գետը մարգարտյա գոտու է նմանվում իր ձևով և փայլով, իսկ ամպը շափյուղայի հետ է համեմատվում մուգ կապույտ կամ սև լինելու հանգամանքով: Գետը,

որպես համեմատության առարկա գերիշխողն է, քանի որ միայն նրա՝ գոտու հետ նմանեցվելու շնորհիվ է հնարավոր դառնում ամպի համեմատությունը շափուղայի հետ:

Կալիդասան բարդ համեմատություն կազմելու այս ձևը շատ է սիրում և բազմիցս օգտագործում է ինչպես «Ամպ-ավետաբեր» պոեմում, այնպես էլ այլ գործերում: Սա հնարավորություն է տալիս բանաստեղծին երևույթները նկարագրել իրենց փոխհարաբերությունների մեջ, նույնիսկ ամենատվորական համեմատությանը թարմության, նորության շունչ հաղորդել:

Հաճախ բանաստեղծը պատկերը ամբողջացնելու և ավարտուն դարձնելու համար պարզ համեմատությունները զուգորդում է բարդ համեմատությունների հետ: Օրինակ՝

(10) utpaśyāmi tvayi taṭagate snigdhabhīnnañjanābhe
sādyaḥ kṛttadviradadaśanacchedagaurasya tasya
līlāmadreḥ stimitanāyanapreṣanīyāṃ bhavitrīṃ
amśanyaste satī halabhṛto mecake vāsasīva. (59)

«Նախազգում եմ, թե ինչ հիազմայլ կլինի տեսքը,
Երբ նման յուզում տրորված ծարիրի, դու ելնես լեռան
Գազաթը ճերմակ, կուրացնող, ինչպես նորահատ շեղբը
փղի ժանիքի:

Այդպես սևաթույր թիկնոցն է նետված հզոր ուսերին
Բալառամայի»¹⁶:

Նախ ամպն առանձին համեմատվում է սուրմայի հետ, իսկ Կայլասա լեռը՝ փղի ժանիքի, այնուհետև արդեն լեռը նմանեցվում է Բալառամային, իսկ ամպը՝ թիկնոցի:

3) Մավալուն համեմատության մի այլ եղանակն էլ միևնույն առարկան միևնույն հատկանիշով տարբեր առարկաների հետ զուգորդելն է: Այսպես, ահա՝ Կայլասա լեռը իր կուրացնող փայլով, շողշողուն ձյունածածկ գագաթներով ու ժայռերով նախ համեմատվում է փերիների հայելիների հետ, այնուհետև՝ ջրաշուշանների, իսկ հետո արդեն՝ Շիվայի բարձրագույն ծիծաղի հետ (58-րդ քառատող): Բանաստեղծն արարում է պատկերների յուրատեսակ աստիճանավորում, որտեղ Շիվայի բարձրագույն ծիծաղը կուրացնող սպիտակության ամենացայտուն խորհրդանիշն է դառնում:

¹⁶ Բալառաման Կրիշնայի ավագ եղբայրն է՝ «Մահարհարատա» էպոսի հերոսներից: Ի տարբերություն Կրիշնայի, նա սպիտակամաշկ է, սակայն սևաթույր թիկնոց է կրում:

Ս. Լ. Նեկելան այս տարատեսակը անվանում է համեմատություն կոմպլեքսային պատկերով¹⁷:

4) Ծավալուն համեմատության մի այլ եղանակ. երբ ունենք համեմատության առարկաների և պատկերների զույգեր, բայց առարկաներից մեկը անփոփոխ կերպով դառնում է նաև համեմատության պատկեր.

Այսինքն $C_1 = C_2$, իսկ $C_1' \neq C_2'$

Համեմատության եզրերը միավորվում են փոփոխական բայական հատկանիշի շնորհիվ.

(11) paścāduccalrbhujataruvanaṃ maṇḍalenābhilīnaḥ
sandhyaṃ tejaḥ pratnavajapāpuṣparaktaṃ dadhānaḥ
nṛttārambhe hara paśupaterārdranāgājīnecchāṃ
śāntodvegastimitanayanam dṛṣṭabhaktirbhavānyā. (36)

«Այնուհետև պարուրելով անտառը Շիվայի վեր (պարզված) ձեռքերի (դու), որ վերջալույսին բոսոր ես ինչպես շինական վարդը, վերացրու Շիվայի ցանկությունը պարի սկզբում բռնելու դեափղի արյունաթաթախ մորթը» ...

Թեև արտահայտված է շատ յուրահատուկ, բայց սա նույնպես համեմատություն է, որի մի եզրում վեր պարզված ձեռքերով Շիվան է ու բոսորագուն ամպը, մյուս եզրում նույն Շիվան և դեափղի արնաներկ մորթը: Մենք շենք կարող սա պարզ համեմատություն համարել, այսինքն այնպիսին, որտեղ սոսկ ամպը համեմատվում է փղի մորթի հետ, իսկ մյուս եզրը դեն նետել, քանի որ դեափղի մորթի պատկերը թևադրված է Շիվայի պատկերով. Շիվայի կերպարն է, որ ձևավորում է ողջ ծավալուն համեմատությունը: Առանց Շիվայի բանաստեղծը դժվար թե ամպը համեմատեր փղի մորթի հետ: Որպեսզի պարզ լինի, թե ինչի մասին է խոսքը, զուգադրենք այս համեմատությունը մեկ ուրիշի հետ, որը հանդիպում է նույն 36-րդ քառատողում: Այստեղ ամպը որ բոսոր է ներկվել վերջալույսի շողերից, համեմատվում է նաև շինական վարդի հետ: Համեմատվում է ազատորեն, անկախ այլ առարկաներից, իսկ առաջին համեմատության մեջ ամպի և փղի մորթի ընդհանուր հատկանիշը դարձյալ բոսորագունն է, բայց եթե ամպը շարաբերակցվեր Շիվայի կերպարին, նրա նմանեցումը փղի մորթին անհնար կլիներ: Այնպես որ առաջին համեմատությունը պարզ է, իսկ երկրորդը՝ բարդ:

17 С. Л. Невелева. Вопросы поэтики... стр. 40.

Բերենք մեկ այլ օրինակ ևս: Ահա 51-րդ քառատողը:

Երբ ամպը խոնարհվում է խմելու Գանգեսի վճիտ, բյուրեղացող ջուրը, գետը, որի մեջ արտացոլվել է ամպի սև ստվերը, չքնաղ է դառնում, կարծես Զամնայի սև ջրերի հետ Գանգեսի խառնարանը հիմա հենց այստեղ է: Համեմատության առարկա են Գանգեսը և ամպը, համեմատության պատկեր՝ Գանգեսը և Զամնան: Գանգեսը մղում է տալիս ողջ համեմատությանը:

5) Կան նաև ծավալուն համեմատություններ, ուր առարկաների և պատկերների զուգբերում երկու պատկերներն էլ հավասարազոր են, ոչ մեկը չի գերիշխում ու չի թելադրում համեմատության կառուցումը: Օրինակ՝ 15-րդ քառատողում: Այստեղ ծագող ճաճանչագեղ ծիածանը սևաթուր ամպին նույնպիսի շուք կտա, ինչպես Կրիշնային՝ սիրամարգի պուշը:

Ամպը նմանեցվում է Կրիշնայի թուխ մարմնին, իսկ ծիածանը՝ Կրիշնային զարդարող սիրամարգի պուշին: Բայց յուրաքանչյուր առարկա կարող էր նմանեցվել իր պատկերին՝ անկախ մյուսից. այստեղ պատկերները երկուսն էլ հավասարազոր են: Պարզապես նրանց համադրումը օգնում է լուսի ու ստվերի հակադրության ստեղծմանը, որն, ինչպես արդեն գիտենք, Կալիդասայի համար նախընտրելի է գունային բոլոր համադրություններից:

6) Ահա ևս մի տարատեսակ. համեմատության առարկաները զուգորդվելով հանդես են գալիս որպես համեմատության միայն մեկ պատկերի բաղկացուցիչ մասեր: Օրինակ՝ 18-րդ քառատողում ամպը Ամրակուտա լեռան գագաթի դեղնավուն լանջերի հետ նմանեցվում է (մայր) հողի ստինքի:

2. Պոեմի պատկերավորության սիստեմը հենվում է շնչավորման վրա: Փաստորեն համեմատությունների և այլ տրոպների մեծագույն մասը գոյության են կոչվում շնչավորման միջոցով. վերջինս ընդգրկում է ողջ պոեմը, թափանցում նրա բոլոր ոլորտները:

Ամպը սիրուց խելակորույս յակշայի երևակայությամբ շնչավորվում է որպես,

ա) բարեկամ, ընկեր, եղբայր՝ յակշայի և լեռների համար

բ) սիրեցյալ՝ գետերի, կանանց համար

Գետերը, որպես չքնաղ դիցուհիներ, կանացի տարբեր բնավորություններ են մարմնավորում: Վետրավատի գետը խոժոռահոն, քմահաճ գեղեցկուհի է, պչրուն ու սեթևեթ է Նիրվինդհյա գետը. միայնակ, սիրաբաղձ կին է խորհրդանշում Սինդհուն. ամոթխած, աղքատական սեք է տաժում ամպի նկատմամբ Գամբհիրան, իսկ սրբազան Սարասվատիի

չրբը կրոնական անանձնական սերը ճանաչելու համար մաքրագործում են ամպը:

Կայծակը ամպի կիսն է, քամին՝ ծաղիկների սիրեցյալը և այլն: Համեմատություններից շատերը ամբողջական շնչավորված պատկերի առանձին բաղադրիչներն են:

(13) teṣāṃ-dikṣu prathitavidīśalakṣaṇāṃ rājadhānīm
gatvā sadyah phalamavikalāṃ kāmukatvasya labdhā
tiropāntastanītasubhagaṃ pāsyasi svāduyattat
sabrūbhaṅgaṃ mukhamiva payo vetravatyaścalormi. (24)

«Այդ կողմերում մեծ հռչակ վայելող Վիդիշայում դու
Կզգաս անսահման վայելքը սիրո:

Անհագ ըմպելով անուշ կարկաշող Վիտրավատիի ջուրը՝ քաղցրաշիթ,
Որ կոհակվում է վետվետուն, ինչպես մի խոժոռահոն

դիցանուշի դեմք»:

Այս քառատողում միակ համեմատությունը վերջին տողում է. վետրավատի գետի ալիքները նմանեցվում են կանացի խոժոռահոն դեմքի: Այս համեմատությունը բաղկացուցիչ մասն է շնչավորված պատկերի, ուր ամպը սիրեցյալն է, գետը՝ սիրուհին. ամպը խմում է ջուրը, ասես սիրեկանը համբուրում է խոժոռահոն գեղեցկուհուն. դեմքը (pa — 'խմել' բառը նշանակում է նաև 'վայելել'): Սակայն անմիջականորեն համեմատվող եզրեր են միայն ալիքվող ջուրը և խոժոռահոն դեմքը:

Նմանօրինակ դեպքերի համար մենք նախօրոք նշում ենք, թե ինչպիսի շնչավորված պատկերներ են խորհրդանշում ամպը, զանազան գետերը և այլն, և առանձնացվում են անմիջականորեն նմանեցվող եզրերը:

«Ամպ-ավետաբեր» պոեմում կան 60-ից ավելի համեմատություններ: Հնդիկ հետազոտող Չելլայան Պիլայը Կալիդասայի համեմատություններին նվիրված աշխատության մեջ այբբենական կարգով բերում է Կալիդասայի ստեղծագործություններում, այդ թվում և «Ամպ-ավետաբերում» հանդիպող համեմատությունների պատկերները (ընդհանուր քանակը՝ 2250): Բայց որպեսզի լիակատար պատկերացում ունենանք պոեմի համեմատությունների մասին, պետք է հետազոտել ոչ միայն upamāna-ն (համեմատության պատկերը), այլև upameya-ն (համեմատության առարկան), քանի որ նույնիսկ ամենասովորական պատկերը, զուգորդվելով նոր ու անսպասելի առարկայի հետ, նոր ու թարմ հնչողություն է տալիս համեմատությանը:

Թվարկում ենք պոեմում համեմատության առարկա օբյեկտները և նրանց համապատասխան պատկերները: Նշենք, որ բարդ համեմա-

տությունների առարկաներն ու պատկերները բերվում են զույգ-զույգ կամ եռյակներով: Նշում ենք, թե որ համեմատություններն են ֆունկցիոնալ, այսինքն կառուցված առարկայի և պատկերի ներքին նմանության վրա (օր. քախժում է ինձ համար, ինչպես միայնակ շակրավախի՞ն իր հեռավար վարուժանի համար) և որոնք են որոշակի-զգայական, այսինքն համեմատության եզրերի նմանությունը հիմնվում է զգայական հատկանիշի վրա (տեսողական, լսողական և այլն):

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ

ԱՄՊԸ ԵՎ ՆՐԱ ՈՒՂՆԿԻՑՆԵՐԸ

1. Ամպը 2. Կայծակը 3. Որոտը 4. Միածանը 5. Ամպի շողքը
6. Անձրևը

Պատկերների համակարգում շնչավորվում են

1. Ամպը՝ ա) Որպես ընկեր, բարեկամ, եղբայր յակշայի և լեռների համար:
բ) Միրեցյալ՝ գետերի և կանանց համար:
2. Կայծակը՝ ամպի կիներն է:
3. Որոտը՝ ամպի լեզուն, ձայնը:
6. Անձրևը՝ ամպի արցունքները:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ամպի համար

1. adreḥ sṛṅga (14)¹⁸—լեռնագագաթ (զործառակա՛ն):
2. ārdraṅgājina (36)—գեափղի (արյունից) թրջված մորթի (տեսողական):
3. kalabha (78)—մատղաշ փիղ—(տեսող.):
4. pādo viṣṇoḥ (57)—Վիշնուի կրունկը (տեսող.):
5. bhartuḥ kaṅṭhacchavi (33)—Շիվայի (մուգ կապույտ)՝ վիզը (տեսող.):
6. śārṅgino varṇacaura (46)—Վիշնուի գույնի համօտակիչ (տեսող.):
7. suragaja (51)—Ինդրայի փիղը (տեսող.):
8. sopāna (60)—աստիճան (տեսողական և շոշափական):
9. snigdhabhīnnāñjana (59)—յուղի մեջ տրորված ծարիր (տեսող.):

18 Փակագծում նշված թվանշանը ցույց է տալիս ջրաստղի համարը:

10. snigdhaveṇī (18)—(կնաջ) շողշողուն հյուսք (տեսող.):
Ամպը (փիղ) և լեռնագագաթը (լեռը) (հողաթուփը)

11. vaprakṛīḍāparīṇatagaḷaprekṣanīyaṃ (2)—փիղ, (որ) խոնարհ-
չել է հողաթմբի հետ խաղալու (տեսող.):

Ամպը և Ամրակուտա լեռը (կնոջ կուրծք)

12. madhye śyāmaḥ stana iva bhuvah śeṣavistārapāṇḍuh (18)—
մեջտեղում մուգ (սև), իսկ եզրերից դեղնավուն, ինչպես (մալը) երկրի
կուրծքը (տեսող.):

Ամպը (սև բիկնոց) և Կայլասա լեռը (Բալառաման)

13. asanyaste sati halabhṛto mecake vāsasīva (59)—(չու) սև
(ես), ինչպես Բալառամայի թիկնոցը, (որ) նետված է նրա ուսերին
(տեսող.):

Ամպը (գուղձ) և Հիմավատ լեռը (Շիվայի սպիտակ ցուլ)

14. śubhratrinayanavṛṣotkhatapaṅkopameyāṃ (52)—(երբ հանգ-
չես այնտեղ (լեռան վրա), նման կլինես սև գուղձի, որին պողահարել
է ասես Շիվայի ցուլը սպիտակ (տեսող.):

Կայծակը

15. khadyotalivilasitanībhām (78)—նման լուսատիտիկների շար-
քի առկայծումների (տեսող.):

Կայծակը՝ ամպի ֆոնին

16. kakanikaṣa (37)—մլնակի վրայի ոսկեշերտիկ (տեսող.):
Որոտը

17. muraḷa (56)—(փոքրիկ) թմբուկ (լսող.):

Ծիածանը

18. ratnacchāyavyatikāra (15)—գոհարեղինի փալլիլանք
Ամպը (Կրիշնա) և ծիածանը (սիրամարգի պոչ):

19. yena śyāmaṃ vapuratitarām kāntimāpatsyate te
barheṇeva sphuritarucinā gopaveśasya viṣṇoḥ (15)—Որի (ծիա-
ծանի) ճաճանչը սևաթույր մարմնիդ շուք կտա այնպես, ինչպես հովվա-
զգեստ Վիշնուին պոչը զմրուխտահավի¹⁹ (տեսող.):

¹⁹ Հովվազգեստ: Վիշնու—Վիշնու աստվածը իր 10 մարմնավորումներից մեկի ժամա-
նակ ծնվում է երկրի վրա որպես հերոս-արքա, Կրիշնա անունով, որ մանկուցյան տա-
րիներին հովվաթույրն էր անում: Կրիշնայի մաշկի գույնը խիստ թուխ էր, դրանով իսկ նա
համեմատուցյան եզր է դառնում թուխի համար:

Ամպի շողքը

20. pratnavajapapuşpa (36)—*չինավարդի ժաղիկը (տեսող.)*

Շիվայի վեր պարզված ձեռքերը (paśupaterbhujataruvana)—*անտառ
և ամպի շողքը (ardranāgājina)*—*դեպիդի արյունաթաթախ մորթի:*

21. Śe'u orhēnāk (12)—ը (տեսող.):

Ամպը և գետերը

Ամպը և Չարմանվառի գետը

(շափուղայով ընդելուզված մարգարտահյուս գոտի):

22 Śe'u orhēnāk (10)—ը (տեսող.):

Գանգեսի ջրերը ամպի մուգ արտացոլով

23. yamunāsāṅgamena (51)—(ինչպես) *Ջամնայի հետ խառնվե-
լիս (Տե'ս էջ 12—13-ի բացատրությունը) (տեսող.):*

Լեռներն ու լեռնագագաթները

Լեռները տղամարդկային էություն են մարմնավորում և խորհրդ-
դանշում են ամպի ընկերներին:

Կայլասա լեռը

1. cchāyābhinnasphaṭikaviśada (62)—*շողշողուն (սպիտակ) ինչ-
պես նստակերտ բլուրեզ (տեսող.):*

2. tryambakasyājāhāsa (58)—*Շիվայի բարձրագույն քրքիշի (նը-
ման)²⁰ (տեսող.):*

3. tridaśavanitadarpaṇa (58)—*երկնային փերիների հալելիներ
(տեսող.):*

Կայլասայի գագաթը

4 dviradadaśanacchedagaura (59)—*սպիտակ (ինչպես) փղի ժա-
նիքի կտորը (տեսող.):*

5. kumudaviśada (58)—*սպիտակ (ինչպես) ջրաշուշան (տեսող.):*

Գետերն ու նրանց ջրերը

Ռեա գետը (Վինդհյան լեռների ժայռերից ճյուղավորված վտակնե-
րով)

1. bhakticchedairiva viracīṣṁ bhūtimaṅge gajasya (19)—(ինչ-
պես) *փղի մարմնին դրոշմված շերտանախշ նկար (տեսող.):*

²⁰ Զերմակ ստամեների պատճառով Շիվայի զրքիշը կուրացնող սպիտակության խոր-
հրդանշան է:

Գամբհիրա գետի վեիտ ջուրը (Գամբհիրան աղջկական ամոթխած սիրո խորհրդանիշն է)

2. cetas (40)—հոգի (գործառ.):

Սիեդհուի ջուրը (Սինդհուն խորհրդանշում է լքված, միայնակ կնոջ)

3. veqībhūtapratana (29)—բարակ, ինչպես—միայնակ կնոջ հյուսքը²¹ (տեսող.):

Վետրավատի գետի ալիվոլ ջուրը (Վետրավատին գեղեցիկ, քաղցրահամրույի կնոջ՝ ամպի սիրեցյալի մարմնացումն է)

4. sabhrūbhaṅga mukha (24)—խոժոռահոն դեմք (տեսող.—գործառ.):

Գանգեսի ջուրը

5. sphaṅkaviśada (51)—սպիտակ (ինչպես) բլուրեղ (տեսող.):

Յակշայի կիներ և նրա արտափներ

1. Կինը 2. Նրա դեմքը 3. Շուրթերը 4. Մարմինը 5. Աչքերը 6. Ազդրը 7. Ունքերը 8. Զեռքերը:

Կիեր

1. cakravākī (80)—չակրավակի (թռչուն)²² (գործառ.):

2. śīśiramathitā padmīnīvānyarūpā (80)—ալլահիտիված, ինչպես լոտոսը սառնամանիքին (տեսող.—գործառ.):

3. sābhre 'hnīva sthalakamalīnī (89)—Ինչպես ցամաքում (աճող) լոտոսը ամպոտ օրերին, ոչ քուն, ոչ արթուն (գործառ.):

Կիեր լսում է ամպին ուշադիր

4. pavanatanayaṃ maithilīva (97)—ինչպես Սիտան՝ Քամու զավակին²³:

21 Միայնակ կիեր մազերը հյուսում էր մի հյուսքով, շեր արձակում, շեր գանգրացնում, ձե շեր տալիս, մինչև ամուսնու վերադարձը:

22 Զակրավակի— թռչուն, որն, ըստ ավանդության, մի ճգնավորի անեծքով ստիպված է ամեն գիշեր անշատվել սիրեցյալից:

23 Սիտային՝ Ռամայի կնոջը, տանհազուսի դե Ռավանան առանգում է և տանում լանկա (Ցեյլոն). Կապիկների առաջնորդ Հանումանը՝ Քամու որդին, թռչում-անցնում է Օվկիանոսը, հասնում Ռավանայի նստավայրը և Ռամայից լուր ավետում Սիտային:

5. indordalnyam tvadupasaraṅakliṣṭakānterbibharti (81)—*լուսնի դալկութիւնն ունի, որի գեղեցկութիւնը սքողված է քո (այսինքն ամպի՝ Վ. Ա.) միջամտութիւնից — (տեսող.- գործառ.)*;

6. śaśin (101)—*լուսին (տեսող.)*;

Շուրթերը

7. pakvabimba (79)—*բիմբալի հասուն պտուղ (տեսող.)*;

Մարմինը

8. prācīmūle kalāmātrāseṣā himāṃsoh (86)—*լուսնի մահիկի ^{1/18} մասը արեգակնածագ երկնքում (տեսող.- գործառ.)*;

9. śyāmā (101)—*լիանա (տեսող.)*;

Աչքերը

10. (աչքերը՝ ամպին նկատելու պահին) mīnakṣobhaccalakuvalaya (92)—*ձկների խայտանքից դողդողացող կապույտ լոտոս(ներ) (տեսող.- գործառ.)*;

11. cakitaharīṅīprekṣaṇa (79, 201)—*վախվորած կղնիկի աչքեր (տեսող.)*;

12. mrgākṣī (92)—*կղնաչվի (որի աչքերը նման են կղնիկի աչքերին) (տեսող.)*;

Ազդրը

13. sarasakadalīstambhagaura (95)—*ճերմակ (ինչպիսի բանանենու թաց բունը (տեսող.)*;

Մազերը

14. śikhināṃ barhabhāra (101)—*սիրամարգի պոչ (տեսող.)*;

Ունքերի խաղը

15. pratanu nadivīci (101)—*գետի թեթև ծիւնք (տեսող.)*;

Ձեռները

16. latā (94)—*լիանա (տեսող.)*;

Ալակա ֆաղաֆը (շնչավորվում է որպես սիրահար կին (kāminī) դրան համապատասխան էլ համեմատության եզրեր են ստեղծվում նրա շրջապատի համար. կայլասա լեռը, որի լանջին հավել է ֆաղաֆը՝ սիրեցյալ, դղյակները՝ կնոջ մարմին, Գունգեսը՝ դեն նետված մետաֆյազգեստ, դղյակների գագաթին քառած ամպերը՝ խոպոպներ, անձերը՝ մարգարտահյուս ցանց մազերի համար)։

1. Տե՛ս օրինակ (8)-ը (տեսող.)

Ալակայի դրակները (Ալակայի դրակները և այն ինչ-որ կա դրակներում համեմատվում են ամպի և նրա ուղեկիցների հետ. դրակները նման են բարձր ամպին, դրակներում ապրող հրայրֆոս գեղեցկունիները՝ կայծակին, պատերի գույնզգույն նկարները՝ ծիածանին, թմբուկների զարկը՝ ամպի որոտին, գոհարահուռ հատակները՝ ամպի ջրին):

2. vidyutvantam lalitavanitāḥ sendracāpaṃ sacitrāḥ
saṅgītāya prahatamurajāḥ snigdhaḡambhīraghoṣam
antastoyam manimayabhavas tuṅgamambhralihāgrāḥ
prāsādastvām tulayitumalam yatra talstairviśeṣaiḥ (64)

«Այլ ամպածրար աշտարակներով դրակների մեջ ամեն ինչ ասես մրցում է քեզ հետ.

Հրայրֆոս կանայք՝ քո կայծակի հետ, ծիածանիդ հետ՝ նկարները վառ,

Ձնգուն երգերը ու թմբուկների զարկերը խորունկ, խուլ որոտիդ հետ, Վճիդ ջրիդ հետ՝ նրանց հատակներն աղամանդահուռ» (տեսող.):

Յակչայի տունը և նրա շրջակայքը

1. Տունը 2. Դռան կամարը 3. Զվարճանքների բլուրը 4. Իլուրեղակալակյա հարթակի վրա կանգնած ձողի զմրուխտյա հիմքը:

Տունը (Յակչայի բացակայությամբ)

1. kamala sūryāpaye (77)—լոտոսը արևամուտին (գործառ.):

Կամարը

2. amaradhanus (72)—Ինդրայի աղեղ (ծիածան) (տեսող.):

Զվարճանքների բլուրը (որի գագաթը մուգ կապույտ շափռտղայից է, իսկ ցանկապատը՝ բանանի ոսկե ծառերից՝ շանքարձակող ամպ):

3. Śh'u oṛihṅak (5) (տեսող.):

Ձողի զմրուխտյա հիմքը

4. anatipraudhavaṃśa (76)—դալար եղեգնի շիվ:

Կանանց աչքերը

1. madhukaraśreṇi (35)—մեղունների պարս (տեսող.):

Դաշապոճիայի կանանց աչքերը, թերթերունքները վեր նետելուն պես, սպիտակաթուցների ֆոնին սև ու սպիտակ գույների խաղ են ստեղծում, որ նման են.

2. uparivilasatkīṣṇasāra (47)—կալթող ճանճկեն վիթերի (տեսող.):

3. kundakṣepānugamadhukara (47)—հասմիկների հուլիներին թառող մեղունների (տեսող.):

Հոնֆերը

4. latā (47)—լիանա (տեսող.):

Այլ առարկաներ

1. Քամի 2. Շիվայի ձեռքերը 3. Անտառի ոգիների արցունքները (ցող)
4. Թմբուկների զարկը. 5. Ուղջայինի քաղաքը 6. Արջունան²⁴:

Սիպրայի ֆամին

1. priyatama prārthanācaṭukāra (31)—(իր) փափագին (հասնելու համար) շողումող սիրեկան (գործառ.):

Շիվայի վեր պարզված ձեռները

2. taruvana (36)—անտառի ծառեր:

Արցունքի կաթիլները

3. muktāsthūla (103)—մեծ (ինչպես) մարգարիտ (տեսող.):

Թմբուկների զարկը

4. tvadgambhīradhvani (66)—(որոնց) ձայնը խորունկ է (ինչպես) քոնը (այսինքն ամպինը) (լսողական):

Ուղջայինի ֆաղաբը

5. divaḥ kāntimatkhanda (30)—եղեմի սքանչելի բեկոր (գործառ.):

Արջունան նետեր է հեղում քշամինների դեմքին

6. dhārāpātaistvamiva kamalāni (48)—ինչպես դու (այսինքն ամպը) տեղատարափով՝ (հեղում ես) լոտոսները (գործառ.):

Այսպիսով, պոեմում հանդիպում են 61 պարզ և բարդ համեմատություններ: Նրանց մեծ մասը կառուցվում է որոշակի-զգայական հատկանիշի հիման վրա (3-ը լսողական, մեծամասնությունը՝ տեսողական), միայն մի փոքր մասն են կազմում գործառական համեմատությունները (8-ը), այսինքն այնպիսիք, որոնք հիմնված են առարկայի ներքին հատկանիշի վրա, 4-ը, այսպես կոչված, տեսողական-գործառական համեմատություններ են, երբ առարկայի արտաքին հատկանիշը բացահայտում է նաև նրա ներքին էությունը (օր. «Կնոջ մարմինը բարալիկ է, ինչպես լուսնի մահիկի 1/16 մասը արեգակնածագ երկնքում» — այստեղ տեսողական հատկանիշը բացահայտում է նաև կնոջ հոգեվիճակը՝ նա հյուծվել է թախծից): Այս թվերը խորհելու առիթ են տալիս,

²⁴ «Մահարհարատա» էպոսի գլխավոր հերոսներից:

գործառական և որոշակի-զգայական համեմատությունների հարաբերությունը խոսում է հեղինակի ոճի անանձնահատկությունների մասին: Կալիդասան քնարական պոեմ է գրել: Բայց սիրո ռասան արտահայտելու համար նա հազվադեպ է դիմում զգացմունքի անմիջական նկարագրությանը, կամ ուղղակի անվանում այն: Հերոսի և հերոսուհու հոգեվիճակը բացահայտում է զգայական պատկերների միջոցով, որոնց մեջ գերակշռում են գունային զանազան երանգավորումներ:

«Իմաստը, որը զգացվում է ներքնատեսությամբ (այսինքն երեվակվողը), լինում է երկու կարգի՝ սովորական—laukika և բանաստեղծական—kāvya-vyapara-gocara: Երկրորդը սովորական խոսքի մեջ չի պատահում և, նույնիսկ, չի կարող որոշակի, նրան համապատասխանող բառով արտահայտվել: Այդ զգացվողը (իմաստը) հենց ռասան է»—ասում է Աբհինավադուպտան: Սովորական հասկացողությունը «կարող է հանդես գալ ինչպես որպես արտահայտվող, այնպես էլ՝ որպես երևակվող իմաստ, էմոցիան երբեք չի կարող արտահայտվող լինել: «Ցասում» բառի իմաստը սոսկ համապատասխան զգացումի մասին հասկացողություն է, բայց ոչ ինքը՝ զգացումը»²⁵,

Կալիդասան քաջ գիտեր այս սկզբունքը, թեև, հավանաբար, նրա ժամանակ դրա տեսական հիմնավորումը դեռևս չկար: Բանաստեղծը շատ քիչ է խոսում հերոսի և հերոսուհու զգացումների մասին, բայց երբ նկարագրում է շնչավորված բնության տեսարանները՝ նրանց միջոցով հառնում է այն շերմ կարոտն ու թախիծը, որ համակել են Կալիդասայի հերոսին: Ամենուրեք սեր է, և միայն նա է զրկված իր սիրեցյալին տեսնելու երջանկությունից: Պոեմի թաքնված, բայց «երևակվող», իմաստի բացահայտման խնդրին են ծառայում նաև համեմատությունները, որոնք, ինչպես և ողջ պոեմը, Կալիդասան վրձնում է հանճարեղ նկարչի նման: Նրա յուրաքանչյուր քառատողը մի շքնաղ ու ավարտված տեսարան է, հազեցված ներթին զգացմունքով, փիլիսոփայական խորքով և գունային հարուստ երանգներով:

Պոեմի այս առանձնահատկությամբ է բացատրվում նաև այն հանգամանքը, որ պոեմի գլխավոր հերոսը՝ յակշան, երբեք համեմատության առարկա չի դառնում: Դա մասամբ կարելի է վերագրել այն հանգամանքին, որ յակշան պոեմում հանդես է գալիս որպես հաղորդող (адресант): Ավելի կարևոր է այն, որ հերոսը շատ քիչ է խոսում իր և իր զգացումների մասին (միայն կնոջը հաղորդվելիք լուրը շարադրե-

²⁵ Մեդերումն քստ М. Ю. Алиханова. Некоторые вопросы учения о дхванн в древнеиндийской поэтике. «Проблемы теории литературы и эстетики в странах Востока». М., 1964, стр. 26.

լիս), բայց բնության ու ամպի անցնելիք ճանապարհի նկարագրութիւնները անուղղակիորեն «երեակում են» : Երոսի տրամագրութիւնն ու ապրումները :

Բանաստեղծն ընտրել է սիրո մասին խոսելու դժվարագույն, բայց և ամենաարդունավետ ուղին. ողջ պոեմը պատմում է յակշայի ու նրա մեծ սիրո մասին, բայց համարյա առանց նրա ու նրա ղգացումների մասին հիշատակելու, կողմնակի նկարագրութիւնների միջոցով: Եվ սիրո ռասան «երեակելու» համար գլխավոր միջոց ու գործող անձ է դառնում ամպը՝ յակշայի խոսքի հասցեատերն ու ընկալողը: Նա է պոեմի համեմատութիւնների «հերոսը»: Ամպը որպէս համեմատութիւն առարկա է հանդես գալիս 24 պարզ և բարդ համեմատութիւնների մեջ (պոեմի բոլոր համեմատութիւնների 1/3-ից ավելին) : Բացի դրանից, ինչպես կտեսնենք ստորև, պոեմի այն մասերում, ուր նրա դերը, որպէս գործող անձի, թուլանում է կամ վերանում, ամպը և նրա ուղեկիցները պատումի մեջ են ներքաշվում որպէս շատ համեմատութիւնների պատկերներ :

13 համեմատութիւններ նվիրված են յակշայի կնոջը, ընդ որում այստեղ մեծանում է գործառական և տեսողական-գործառական համեմատութիւնների թիվը :

Համեմատութիւնների մյուս շնչավորված ու հաճախ հանդիպող առարկաներից են գետերը, լեռները (առավելապես ամպի հետ հարաբերակցված) և Ալակա քաղաքը :

Այժմ տեսնենք, թե բանաստեղծը ինչ բնագավառներից է վերցնում համեմատութիւն պատկերները : Հոմանիշները շինք առանձնացնում :

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

I, Կենդանական աշխարհից

1. kṣṇasāra (47)—ճանճկեն վիթ (1)²⁶
2. khadyota (78)—լուսատուիկ (1)
3. gaja (2)—փիղ (1)
4. cakravākī (80)—չափրավակի (կարմիր սագ) (1)
5. dviradadaśana (59)—փղի ժանիք (1)
6. barha (15, 101)—սիրամարգի պոչ (2)
7. bhūtiraṅge gajasya (16)—շերտանախշ՝ փղի մարմնի վրա (1)
8. madhukara (35, 47)—մեղու (2)

26 Երկրորդ փակագծում տրվող թվանշանը ցույց է տալիս հոմանիշների քանակը :

9. vṛṣa (52)—*ցուլ (1)*
 10 hariṇīprekṣaṇa (79, 92, 101)—*երկնիկի աչքեր (3)*

II. Մարդու մարմնի մասեր

1. alaka (63)—*խոպոպ (1)*
 2. mukha (24)—*դեմք (1)*
 3. veṇī (18, 29)—*հյուսք (2)*
 4. stana (18)—*կուրծք (1)*

III. Երկինք և երկնային մարմիններ

1. indu—*լուսին (2)*
 2. div—*երկինք (երկեմի իմաստով) (1)*
 3. himāṃśukala—*լուսնի մահիկ (1)*

IV. Բնության երևույթներ (ամպո և նրա ուղեկիցները)

1. amaradhānus—*ծիածան (2)*
 2. garjita—*որոտ (1)*
 3. tadīt—*կայծակ (2)*
 4. megha—*ամպ (արտահայտված անձնական «դու» դերանվամբ)*
 (3)

V. Բույսեր

1. kadalīstambha (93)—*բանանենու բուն (1)*
 2. kamala—*լոտոս (3)*
 3. kunda (47)—*համակ (1)*
 4. kumuda (40, 58)—*չրաշուշան (2)*
 5. kuvalaya (92)—*կապույտ լոտոս (1)*
 6. kusuma—*ծաղիկ (1)*
 7. japā (36)—*չինական վարդ (1)*
 8. bimba (79)—*բիմբա ծառի պտուղ (որը կեղևահանելուց հետո կարմիր է) (1)*
 9. anātipraudha vaṃśa (76)—*դալար եղեգն (1)*
 10 śyāmā (47, 94, 101)—*լիտան*
 11 sthalaḥkaṃalīnī (89)—*ցամաքում աճող լոտոս (1)*

VI. Ջրեր

1. toya (64)—*ջուր*
 2. yamunā (51)—*Ջամնա գետը*
 3. nādivīci (101)—*գետի ծվանք*

VII. Կենցաղային առարկաներ

1. añjana (59)—*ծարիր*
2. darpaṇa (58)—*հայելի*
3. adukūlā (63)—*մետաքսյա զգեստ*
4. muraja (56)—*թմբուկ*
5. sopāna (60)—*աստիճան*

VIII. Հանգամանք, մետաղներ, ակնեղեն

1. indranīla (46)—*շափուղա*
2. kanakanikaṣa (37)—*մլնակի վրայի ոսկեշերտիկ*
3. muktaguṇa (46)—*մարգարտահյուս գոտի*
4. muktā (103)—*մարգարիտ*
5. ratna (15)—*գոհար*
6. sphaṭika (51, 62)—*բյուրեղ*

IX. Վերացական հասկացողություններ

1. aṭṭahāsa (58)—*ծիծաղ*
2. cetas (40)—*հոգի*
3. maṇḍala (36)—*շրջան*

X. Բարձրություններ

1. vapra (2)—*հողաթումբ*
2. adreḥ śrṅga (14)—*սարի գագաթ*

XI. Մարդիկ

(Ինչպես նշել ենք, պոեմում բնությունը շնչավորվում է, սակայն անմիջականորեն որպես համեմատության պատկեր մարդը հանդես է գալիս երկու անգամ)

1. priyatama (31)—*սիրեկան*
2. kāmīnī (63)—*սիրուհի*

XII. Գրական ու դիցաբանական ծագում ունեցող պատկերներ

1. trinayanavṛṣa (52)—*Շիվայի սպիտակ ցուլը*
2. bhartuḥ kaṇṭhacchavi (33)—*Շիվայի կապույտ վիզը*
3. mailthilī (97)—*Սիտա*
4. pavanatanaya (97)—*Հանուման կապիկը (Քամու որդին)*
5. viṣṇu (15, 57, 46)—*Վիշնու աստվածը*
6. suragaja (51)—*Ինդրայի փիղը*
7. halabhṛt (59)—*Քալառամա (Մահաբհարատայի հերոս)*

«Ամպ-ավետարեր» պոեմում կալիդասան համեմատութիւնների պատկերներն ընտրում է այն բնագավառներից, որտեղից և՛ իր բոլոր ստեղծագործութիւնների համար²⁷։ Գերադասում է կենդանական ու բուսական աշխարհից վերցված պատկերները։ Համեմատաբար քիչ է օգտագործում երկնային մարմինները։ Բավականին շատ են դիցաբանական պատկերները։

Պարզենք նաև, թե ինչ պատկերներ է ընտրում բանաստեղծը որևէ հատկանիշ արտահայտելու համար։ Միշտ չէ, որ հնարավոր է առանձնացնել այս կամ այն հատկանիշը։ Հաճախ հատկանիշը ուղղակիորեն արտահայտված չէ, և նրա մասին կարելի է միայն գլխի ընկնել։ Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ հատկանիշների ճշնող մեծամասնութիւնը գունային երանգավորումներ են արտահայտում։ Հիմնականում հենց այս հատկանիշներն են, որ դրսևորվում են ցայտուն ու որոշակիորեն։ Իհարկե շատ հաճախ համեմատութիւնը կառուցվում է հենվելով ոչ միայն գունային նմանութիւն, այլև առարկայի այլ հատկանիշների վրա (օրինակ, կնոջ ազդրը բանանենու թարմ բնի է նմանեցվում ոչ միայն սպիտակութիւն, որ անմիջականորեն նշվում է համեմատութիւն մեջ, այլև ձևի և ողորկութիւն հանգամանքով)։ Այլ դեպքերում էլ համեմատութիւն մեջ նշվող հատկանիշը անմիջականորեն որևէ գույն չէ, բայց հատկանիշի առաջացումը պարտական է գունային համադրութիւնը կամ հակադրութիւնը։ Օրինակ, ամպի սև ստվերը Գանգեսի սպիտակ ջրերի մեջ չքնաղ է, ասես Գանգեսը և Ջամնան խառնվել են ոչ սովորական տեղում։ «Չքնաղ» հատկանիշը այստեղ հիմնված է մուգ և բաց գույների հակադրութիւն վրա, թեև պակաս կարևոր չէ նաև համեմատութիւն պատկերի՝ սրբավայր և ուխտատեղի համարվելու հանգամանքը։ Ստորև թվարկում ենք գունային երանգների արտահայտիչները։

«Սպիտակ» գույնի արտահայտիչներ

1. kumuda (40, 58)—ջրաշուշան
2. tryambakasyāṭṭahāsa (58)—Շիվայի բարձրագույն քրքիշ (1)
3. dviradadaśanaccheda (59)—փղի ժանիքի կտոր
4. sarasakadalīstambha (93)—բանանենու թարմ բունը

²⁷ Pillai K. Chellappan, Similes of Kalidasa, (Visva-Bharati Studies, Vidya Bhavana 7) Calcutta, 1949, p. IX—XXIV.

«Ան»-ի արտահայտիչներ

1. madhukaraśreni (35)—մեղունների պարս
2. viṣṇu (46)—Վիշնու
3. viṣṇoḥ pāda (57)—Վիշնուի կրունկը
4. snigdhabhinnāñjana (59)—լուզի մեջ արքրված ժարիր
5. snigdhaveṇī (18)—կնոջ փայլուն հյուսք

«Մուր-լուսավոր», «Մուր-բաց (սևապիտակ)» հակադրություն

1. aṃsanyasta halabhṛtomecaka vasas (59)—Բալառամայի ուսերին նետված սև թիկնոց²⁸
2. kṛṣṇasāra (47)—ճանճկեն վիթ
3. kundakṣepānugamadhukara (47)—համախի հուլիներին թառող մեղուններ
4. (gaṅga)yamunāsaṅgama (51)—Գանգեսի և Ջամնայի միացման (տեղը)
5. śubhratrinayanavṛṣotkhatapaṅka (52)—(սև) գուղձ՝ պողահարված Շիվայի սպիտակ ցուլի կողմից
6. stana (18)—ստինք (մեջտեղում սև, իսկ կողերից դեղնավուն)

«Կապույտ» գույնի արտահայտիչներ

1. bhartuḥ kaṅṭha (33)—Շիվայի վիզը
2. kuvalaya (92)—կապույտ լոտոս
3. indranīla (46)—շափուղա

Պետք է նշել, որ կապույտ և սև գույները շատ հաճախ շեն տարբերակվում:

«Մուր (սև) և պայծառ (շողշողուն)» հակադրության արտահայտիչներ

1. kakanikaṣa (37)—մշնակի վրայի ոսկեշերտիկ
2. barheṇa gopaveṣa viṣṇu (15)—հովվազգեստ Վիշնուն (զարգարված) սիրամարդի պոչով
3. meghaḥ sphuritadicca (74)—ամպը և հալածակը

«Շողշողուն» հատկանշի արտահայտիչներ

1. khadyotālī (78)—կայծոռիկների շարք
2. chāyābhinnasphaṭika (62)—փողփողացող նստակերտ բլուրիկ
3. ratna (15)—գոհար
4. trideśavanitādarpaṇa (58)—երեսուն աստվածուհիների հայելիները

²⁸ Ի տարբերություն իր եզրո՞ր՝ Կրիշնայի, Բալառաման սպիտակամաշկ էր, ուստի համեմատության եզր է ծառայում սպիտակափառ Կալյասա լեռան համար:

«Կարմիր» գույնի արտահայտիչներ

1. ādranāgājina (36)—*դեպի դե արլունաթաթախ մորթ*
2. pratinavajapāpuṣpa (36)—*չինական վարդի ծաղիկ*
3. pakvabimba (79)—*հասած բիմբալի պտուղ*

«Կանաչ» գույնի արտահայտիչներ

1. aṅatipraudhavamśa (76)—*դալար եղեգնի շիվ(եր)*

Հարուստ է Կալիդասայի ներկայակերպը. նախապատվութունը նատալիս է գունային հակադրութուններին՝ կայծակի փայլատակումը գիշերվա ակնակիր մթնում, ծիածանի երփնեբրանգումը սև ամպի ֆոնին, սև ամպը արծաթափայլ լեռան գագաթին, ամպի սև ստվերը Գանգեսի ջրերի մեջ, Դաշարնայում կետակայի բացվող կոկոններից սպիտակ ցանկապատերը և ջամբուլի հասուն թուխ պտուղներից սևին տվող անտառակները—բազմաթիվ այսպիսի պատկերներ կան պոեմում: Գունային հակադրութունները գերակշռում են նաև համեմատութունների մեջ: Եվ ոչ միայն «Ամպ-ավետարեր» պոեմում: Դրանք Կալիդասայի նկարագրության գեղեցկության բարձրագույն շահանիշն են նաև այլ գործերում: Նշենք, օրինակ, «Ռագհուի տոհմը» պոեմի նշանավոր 13-րդ գլխում Գանգեսի և Զամնայի միախառնման տեղի հոյակապ նկարագրությունը: «Ամպ-ավետարեր» պոեմում այդ սրբազան վայրը օգտագործված է որպես համեմատության պատկեր, այնինչ «Ռագհուի տոհմը» գործում այն հանդես է գալիս որպես համեմատության առարկա, որի համար բանաստեղծի երևակայությունը գտնում է բազմաթիվ, մեկը մյուսից գեղեցիկ ու հետաքրքիր պատկերներ: Բայց մյուս գործերում դրանք հանդիպում են ավելի սակավ, ցաքուցրիվ, իսկ «Ամպ-ավետարեր» պոեմում՝ օրինաչափ և օրգանական կերպով միահյուսվում են պոեմի բանաստեղծական բովանդակությանը: Սակայն այդ մասին՝ մի փոքր ավելի ուշ:

3. Անցնենք համեմատությունների ուսումնասիրության երրորդ ոլորտին. համեմատությունների գործառությանը պոեմում:

Պոեմում կան համեմատություններ, որոնք ծառայում են միայն առարկայի այս կամ այն հատկանիշի առանձնացմանը, հետաքրքիր գուգորություն, վառ պատկերներ ստեղծելուն: Ահա մի օրինակ.

(14) revāṃ drakṣyasyupalaviṣame vindhyapāde viśīrṇāṃ
bhakticchedairiva viracitāṃ bhūtimaṅge gajasya (19)

«Մինչ ծայրակուտակ Վինդհյան լեռներում տեսնես Ռեային, որ վտակների ճյուղավորումով Փղի մարմնին դրոշմված շերտանախշ պեսպես նկարի նման կլինի»:

Բանաստեղծը ինքնատիպ, եզակի ու զարմանալիորեն ստույգ պատկեր է ստեղծում, որ ինքնաբավ նշանակութուն ունի:

Նրբեմն համեմատության պատկերները ընտրվում են ավանդույթի ուժով: Հնագույն ժամանակներից հնդկական գրականության մեջ ընդունված է եղել այս կամ այն պատկերը օգտագործել առարկաների որոշակի խմբի համար: Օրինակ, ասենք, կնոջ գեղեցկությունը նկարագրելիս դեմքը համեմատվում է լուսնի, շուրթերը՝ բիմբա ծառի հասած պտղի, աչքերը՝ եղնիկի աչքերի կամ մեղունների, մարմինը և հոնքերը՝ լիանայի, մազերը՝ սիրամարգի պոչի հետ և այլն: Նման դեպքերում Կալիդասան չի հեռանում ավանդույթից:

Բայց կան նաև համեմատություններ, որոնք գեղագիտական հաճույք պատճառելու հետ մեկտեղ ավելի բարդ նպատակադրում ունեն: Սրանք մեծամասնությունն են կազմում: Այս համեմատությունները կարելի է բաժանել մի քանի խմբի:

1) Համեմատություններ, որոնք կնոջ արդուզարդի առարկաներ են կամ կնոջ մարմնի մասեր:

59-րդ քառատողում իր սևությամբ ամպը համեմատվում է յուղի մեջ տրորված ծարիրի հետ.

...tvayl ... snigdhabhinnāñjanābhe

18-րդ քառատողում ամպը համեմատվում է կնոջ փայլուն հյուսքի հետ:

tvayl... snigdhaveṇīsavare...

Ընդ որում, հյուսքն արտահայտվում է veṇī բառով: Նրբ կինը սպասում է պանդուխտ ամուսնուն, նա հյուսում է մազերը մի հյուսքով (veṇī), չի արձակում, չի գանգրացնում, ձև չի տալիս մինչև ամուսնու վերադարձը: Սիրակարոտ լակշալի կողմից ամպը veṇī-ի հետ համեմատելը մատնում է նրա հոգեվիճակը, անուղղակիորեն ակնարկում կնոջը: Նույնը և 12-րդ համեմատության մեջ:

46-րդ քառատողում (տե՛ս օրինակ 9-ը) գետը և ամպը համեմատվում են շափյուղայով մարգարտյա գոտու հետ:

Իսկ 18-րդ տան մեջ Կալիդասան կազմում է բարդ համեմատություն. հասած մանգոյի պտուղներից դեղնին տվող լեռը իր գագաթին նստած սև ամպով, գուլներով ու ձևով նմանեցվում է ստինքի:

Վերոհիշյալ համեմատությունները, մի կողմից թարմ ու ինքնատիպ պատկերներ են ստեղծում, մյուս կողմից հանում են սիրո կարոտից տառապող լակշալի հոգու և ապրումների միջով բեկված: Յակշալի մտասևեռումը սերն է, և նրա բորբոքված երևակայությունը զրտ-

նում է այնպիսի զուգորդութիւններ, որ ի հայտ են բերում նրա ապրումները:

2) Համեմատութիւնների երկրորդ, կարևոր, խմբի մեջ առկա է շնչավորումը: Շնչավորման մասին արդեն խոսել ենք: Համեմատութիւնների մեջ շնչավորման անմիջական ներթափանցման օրինակներ կան 24, 28, 31, 40, 63-րդ քառատողերում:

Ահա մի օրինակ, ուր շնչավորվում է հովիկը.

dīrghīkurvan paṭumadakalaṃ kūjitaṃ sārasānaṃ
pratyuṣeṣu sphuṭitakamalāmodamaṭtrīkaṣāyāḥ
yatra strīṇāṃ haratī surataglānīmaḥgānukūlaḥ
sīprāvātaḥ priyatama iva prārthanācāṭukāraḥ (31)

Արևագալին հովը Սիպրայից այստեղ է բերում կռունկների զիլ
կանչերը սիրո.

Ու քաղցր բույրով մտերմութիւնն է մատնում
նորաբաց լոտոսների հետ.

Սիրուց նվաղած սիրուհիների մարմինների մեջ հոգնութիւնն
իսկույն անհետացնում է թեթև հպումով,

ինչպես տարփածուն շողում, փաղաքուշ, որ իր փափագին
հասնել է ուզում:

Այս շնչավորված համեմատութիւնների միջից հառնում է սիրո
ռասան, բեկված յակշայի ապրումների միջով:

3) Երրորդ խմբի համեմատութիւնների մեջ ևս առկա է նուրբ հոգեբանական ենթատեքստը: Այս 5 համեմատութիւններում՝ MD. 15, 33, 46, 51, 57 ամպը համեմատվում է հնդկական պանթեոնի աստվածների հետ. մեկ անգամ՝ Շիվայի կապույտ վզի, 3 անգամ՝ Վիշնուի և 1 անգամ՝ Ինդրայի փղի՝ Այրավատայի հետ: Այսպիսի համեմատութիւնները ինքնին շատ շոյող են ամպի համար: Ցակշան, որ ամեն կերպ աշխատում է սիրաշահել ամպին, որպեսզի նա անսա իրեն՝ և լուր տանի կնոջը, առանց միտումի չէ, որ ամպը ամենաբարձր շափանիշների հետ է համեմատում:

4) Նուրբ հոգեբանական ենթատեքստ ունի նաև, այսպես կոչված smaraga (հիշողութիւն) համեմատութիւնը (տե՛ս 5-րդ օրինակը), որն արտահայտում է սիրող յակշայի կարոտն ու թախիժը, ինչպես նաև 7-րդ օրինակում բերված քառատողը, որ կնոջ գեղեցկութիւնը նկարագրող պարզ համեմատութիւնների մի փունջ է: Այս տողերը յակշան ուզում է ամպի բերանով հաղորդել կնոջը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե առավել կարևորն ու շեշտվածն այստեղ վերջին տողն է.

«Բայց ողջ քո տեսքը նմանը, ո՞վ դու
իմ շքնաղ»:

Ասես թե յակշան ամպի բերանով մի անգամ էլ է արտահայտում
իր հիացմունքը նրա անզուգական գեղեցկությանը: Սակայն ավելի ուշա-
դիր ընթերցելիս մեզ համար պարզվում է նաև ենթատեքստը, և այդ
ժամանակ ամենից շեշտվածը դառնում է utpaśyāmi «տեսնում եմ»
բայր: Բնության գրկում ճգնող սիրահարի աչքը, բնականաբար, բնու-
թյան զանազան երևույթների մեջ պետք է որոներ ու գտներ կնոջը:
«Դու սիրված ես, ես մտածում եմ միայն քո մասին» — այս է այն կա-
րևոր, թաքնված իմաստը, որ յակշան ուզում է հաղորդել կնոջը:

Դիտարկենք նաև 78-րդ քառատողի վերջին տողի համեմատությունը

arhasyantabhavanapatitam kartumalpālpabhāsam
khadyotāīvilasitanibhām vidyudunmeṣadṛṣṭim

Քո կայծակնացու հայացքը ուղղիր կացարանից ներս,
Կայծոռիկների շարանի նման թույլ շողացնելով:

Առաջին հայացքից թվում է, թե սոսկ մի հետաքրքիր պատկեր է
կայծակի համար: Բայց իրականում յակշան միտումնավոր է ամպի հա-
յացքը՝ կայծակը, համեմատում կայծոռիկների շարանի թույլ շողքի
հետ, անհանգստանալով, որ կայծակի ուժեղ փայլատակումը կացա-
րանում ապրող կնոջը հանկարծ շվախեցնի: Այստեղ ևս երևում է նրա
հոգատարությունը կնոջ նկատմամբ:

5) Վերջապես անդրադառնանք համեմատությունների ևս մի խմբի:
Այդ համեմատությունները 6-ն են, բոլորը, բացառությամբ մեկի, բարդ
են. ընդ որում բարդ համեմատություններից յուրաքանչյուրի կառուց-
մանը հատկացված է մի ամբողջ քառատող: Այդ համեմատություննե-
րըն էլ հենց կազմում են քառատողի կառուցման նպատակը: Քառա-
տողերն են՝ 18, 47, 51, 52, 58, 59: Ընդհանուրը սև ու սպիտակ գույ-
ների հակադրությունն է: Սրանցից մեկը բերված է 10-րդ օրինակում:

Այս կարգի համեմատություններն ինքնին անզուգական են: Բայց
գունային և լուսային շլացուցիչ հակադրությունների հանդեպ սերը ունի
իր ենթատեքստը: Հայտնի է, որ հոգեկան տարբեր վիճակները հնդիկ-
ների մոտ կապվում են տարբեր գույների հետ. Ձայրույթը, վիշտը՝ սևի,
ուրախությունը, ծիծաղը՝ սպիտակի՝ սերը՝ կարմրի և այլն: Կարծում
ենք, որ սև ու սպիտակ գույների հաճախակի հակադրությունը բացա-
հայտում է բանաստեղծի փիլիսոփայական խոհը. մարդկային կյանքն,
ուր միախառնված են ուրախությունն ու վիշտը, շքնաղ է: Նույն գաղա-
փարը 106-րդ քառատողում Կալիդասան արտահայտում է նաև հան-
րահայտ աֆորիզմի միջոցով:

kasyātyantaṃ sukhamupanataṃ duḥkhamekantato vā
nīcairgacchatyupari ca daśā cakranemikrameṇa

Ու՛մ է տրված միշտ երջանիկ լինել կամ միայն
դժբախտ.

Մարդկային կյանքը վերուվարում է անվագոտու պես:

Այսպիսով, համեմատությունների մի ստվար խումբ ծառայում է
ոչ միայն որպես գեղարվեստական տպավորությունն ուժեղացնելու մի-
ջոց, այլև դառնում է պոեմի գաղափարական ծալքերի և հերոսի հոգե-
րանության լապտախաչման կարևոր գործոն: